Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

30/01/2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Իրինա Արթուրի Քարամյանի «Տեղեկատվա-հաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (19.01.2026, արձանագրություն N 1): Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանը, ՀՀ ՊԿԱ ուսումնական գծով պրոռեկտոր, քաղ. գիտ. թեկնածու Է. Ալեքսանյանը, հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Բ. Լոքյանը, հոգ.գիտ.թեկնածու, դոցենտ Ս. Պողոսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Գ. Ղուկասյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների հարատև զարգացման և արհեստական բանականության ակտիվ կիրառման գործընթացն արմատապես

կերպափոխել է քաղաքական կառավարման արդիականացման գործառութա-կառուցվածքային, սոցիալ-հոգեբանական, գոյաբանական և քաղաքակրթական արժեհամակարգերը: Անորոշություններով և տուրբուլենտությամբ հագեցած աշխարհում տեղի են ունենում և՛ աստիճանակարգային, և՛ ցանցային պարբերաբար ընթացող կերպափոխումներ, որոնք համակարգային ուսումնասիրման կարիք ունեն: Այս դիտանկյունից Իրինա Արթուրի Քարամյանի «Տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսական աշխատանքը ոչ միայն ժամանակակից գիտական օրակարգի գերակա բաղադրիչ է, այլև ապագաբանական նշանակություն ունի:

Թեման, ներառելով արդի քաղաքական գիտության (Political Science) զարգացման ժամանակակից միտումները, արտացոլում է կառավարման և հաղորդակցման մեխանիզմների թվային փոխակերպման գործընթացում պետությունների առջև ծառացած մարտահրավերները և դրանց պատասխանելու իրական հնարավորությունները: Այս առումով ակնհայտ են ուսումնասիրված թեմայի արդիականությունը և տեսական ու կիրառական նշանակությունը: Ավելին, հետազոտությունը յուրօրինակ է, քանի որ հեղինակը տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման ուսումնասիրությունը համադրել է Հայաստանի Հանրապետությունում և քաղաքական կառավարման արդիականացման հիմնախնդիրների վերլուծության հետ՝ հաշվի առնելով դրանց **ինստիտուցիոնալ կառուցվածքը, սոցիալ-մշակութային պայմանները և քաղաքական միջավայրը:**

Արդի թվայնացվող աշխարհի բազմաչափ և խաղային տրամաբանությամբ հագեցած իրողությունները հետազոտական նոր հորիզոններ են բացել զարգացող երկրների քաղաքական գիտության (Political Science) առջև՝ հնարավորություն ստեղծելով զուգահեռ ուսումնասիրելու քաղաքական զարգացման գործընթացների քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Ենթադրվում է, որ քաղաքական կառավարման գործընթացների նման ընկալմամբ է պայմանավորված կյանքի որակի և մակարդակի շարունակական ապահովումը: Գնահատելի է նաև այն հանգամանքը, որ աշխատանքում շեշտադրված իրականացված է քաղաքական ազդեցության թվային գործիքների, այդ թվում՝ էլեկտրոնային ժողովրդավարության, սոցիալական ցանցերի և առցանց հարթակների, ինչպես նաև թվային միջավայրում հանրային գիտակցության մանիպուլյատիվ տեխնոլոգիաների վերլուծություն: Հեղինակին հաջողվել է ներկայացնել քաղաքական գործընթացների թվայնացման երկակի բնույթը՝ ցույց տալով ինչպես թափանցիկության և կառավարման

արդյունավետության բարձրացման ներուժը, այնպես էլ ապատեղեկատվության, լրատվամիջոցների քաղաքական կողմնակալության և կիբեռանվտանգությանը սպառնացող ռիսկերը:

Հետազոտության նպատակը հստակ ձևակերպված է՝ բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ժամանակակից կառավարման գործընթացներում և որոշել դրանց ներդրման հիմնական դժվարություններն ու խնդիրները ՀՀ քաղաքական պրակտիկայում: Այս նպատակով հեղինակը բազմամակարդակ վերլուծել է տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների էությունն ու կիրառման միտումները, ուսումնասիրել միջազգային փորձը, մի շարք երկրների թվայնացման մոդելները, ինչպես նաև գնահատել է այդ փորձի կիրառման հնարավորությունը Հայաստանում:

Տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների համալիր վերլուծությունը հեղինակին հնարավորություն է տվել հստակեցնելու ժամանակակից թվային հաղորդակցության տեխնոլոգիաների գործառույթներն ու ներուժը սոցիալ-քաղաքական փոխգործակցության նոր մոդելների ձևավորման գործում: Միաժամանակ, տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների ուսումնասիրությունը, մասնավորապես ՀՀ-ի օրինակով, նպաստում է պետության սոցիալ-մշակութային զարգացումների խորքային ընկալմանը և կարող է հանդես գալ որպես գործնական հենք պետական կառավարման բարեփոխումների իրականացման և երկարաժամկետ կայուն զարգացման ռազմավարությունների մշակման համար:

Սույն աշխատանքի գիտական նորույթն ակնհայտ է, քանի որ հայաստանյան հետազոտական դաշտում իրականացվել է թվային տեխնոլոգիաների աճող դերի համապարփակ վերլուծություն քաղաքական գիտության տեսանկյունից՝ առաջարկելով նոր, համակարգված մոտեցում: Այն ընդգրկում է թվային տեխնոլոգիաների և կառավարման արդյունավետության փոխհարաբերության համակցված ուսումնասիրություն՝ հաշվի առնելով ՀՀ սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, բացահայտում է թվային տեխնոլոգիաների, ցանցային հաղորդակցության և կառավարման մեխանիզմների փոխկախվածությունը և առաջարկում եզրակացություններ ու որոշ առաջարկություններ պետական քաղաքականության մշակման և քաղաքական կառավարման բարելավման համար:

Հեղինակն ուշադրություն է դարձնում հասարակական կարծիքի ձևավորման, ճգնաժամային իրավիճակների կառավարման և քաղաքական կայունության ապահովման

գործում սոցիալական ցանցերի, թվային հարթակների և մեծ տվյալների մշակման տեխնոլոգիաների դերին: Միևնույն ժամանակ, աշխատանքը քննադատորեն ներկայացնում է թվայնացման ռիսկերը, այդ թվում՝ առցանց հաղորդակցության մանիպուլյատիվ ներուժը:

Առանձնակի գնահատելի է հեղինակի առաջադրած այն վարկածը, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման թվային փոխակերպումը հակասական է և ոչ ամբողջական, ուստի պահանջում է տեխնոլոգիական, իրավական և ինստիտուցիոնալ լուծումների համակարգված համադրում: Ստացված արդյունքներն ընդլայնում են թվային քաղաքական կառավարման առանձնահատկությունների գիտական ըմբռնումը և կարող են օգտագործվել ինչպես տեսական հետագա զարգացումները կանխատեսելիս, այնպես էլ քաղաքական հաղորդակցության և թվային քաղաքականության ոլորտում պետական մարմինների գործնական գործունեության մեջ:

Ատենախոսությունը նորություն է հայաստանյան քաղաքագիտական հետազոտական դաշտում, քանի որ առաջարկվում է համալիր և համակարգված ուսումնասիրություն՝ նկատի ունենալով թե՛ քաղաքականության, թե՛ կառավարման արդյունավետության փոխազդեցությունը:

Ատենախոսությունն իր կիրառական կարևորությամբ ևս առանձնանում է՝ առաջարկություններն ուղղված են պետական քաղաքականության արդյունավետ մշակմանը, քաղաքական կառավարման համակարգի բարելավմանը և քաղաքական մշակույթի ամրապնդմանը՝ միևնույն ժամանակ նպաստելով պետական ինստիտուտների և հասարակության միջև քաղաքական կառավարման, տեղեկատվական քաղաքականության և հաղորդակցության փոխգործակցության մեխանիզմների կատարելագործմանն ու կառավարման ինստիտուցիոնալ հիմքերի ուժեղացմանը:

Ատենախոսությունը հիմնված է համակցված մեթոդաբանական մոտեցման վրա, որը միաժամանակ ընդգրկում է թե՛ որակական, թե՛ քանակական հետազոտական մեթոդներ:

Հետազոտության տեսական մասն ընդգրկում է գիտական գրականության վերլուծություն՝ բացահայտելու տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կառավարման արդյունավետության փոխկապակցվածությունը, ինչպես նաև դրանց սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ ազդեցությունները: Էմպիրիկ ուսումնասիրությունն իրականացվել է դեպքային վերլուծության և համեմատական մեթոդների՝ տարբեր երկրներում պետական կառավարման մեջ տեղեկատվական

տեխնոլոգիաների ներդրման առանձին օրինակների, մասնավորապես՝ Հայաստանի քաղաքական կառավարման առանձնահատկությունների և քաղաքական գործընթացների արդյունավետության ապահովման գործում դրանց դերի ուսումնասիրության միջոցով:

Կոնվերգենտ (զուգամիտող) մոտեցումը հնարավորություն է տվել տեղեկատվական տեխնոլոգիաները դիտարկել որպես առանձին տարրերի՝ թվային մեդիայի, հեռահաղորդակցության և համակարգչային տեխնոլոգիաների միասնական համակարգ:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք. մասնավորապես, օգտագործվել են ատենախոսության թեմային առնչվող ինչպես ակադեմիական գրականություն, այնպես էլ ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթեր, օտարերկրյա և հայաստանյան կազմակերպությունների համացանցային պաշտոնական կայք-էջերում տեղ գտած տեղեկություններ ու տվյալներ:

Իրականացված վերլուծությունից ակնհայտ է, որ քաղաքական կառավարման արդիականացումը, արդյունավետության բարելավումը պայմանավորված են ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումներով, այլև քաղաքական կամքի դրսևորման, կադրային ներուժի զարգացման ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ: Քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձի տեղայնացված ու ազգային առանձնահատկություններին համապատասխան կիրառումը կարող է ծառայել որպես քաղաքական և վարչական համակարգի բարելավման կարևոր գործիք:

Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է այն հիմնադրույթը, որ տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների և քաղաքական կառավարման արդյունավետության միջև առկա է փոխադարձ պայմանավորող կապ: Այդ կապը ազդելով սոցիալ-մշակութային, քաղաքական գործընթացների վրա կերպափոխում է հասարակական կարծիքի ստեղծման գաղափարա- արժեբանական տարածության ընդարձակումը, մարգինալացումը և հեղափոխականացումը:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Վերոշարադրյալը հիմք ընդունելով՝ կարող ենք եզրակացնել, որ Իրինա Քարամյանի կողմից հրապարակային պաշտպանության դրված «Տեղեկատվական-

հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Հաշվի առնելով իրականացված ուսումնասիրության գիտական արժեքը՝ հարկ ենք համարում առանձնացնել մի շարք նկատառումներ, որոնք ապագայում կարող են օգտակար լինել հեղինակ Ի. Քարամյանին՝ թեմայի առավել խորացված ուսումնասիրության ժամանակ: Մասնավորապես.

1. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն օգտագործեր նաև **կառուցվածք-դերակատար «structure/agency»** մեթոդը, որը հնարավորություն է տալիս պարզելու՝ որոշումների ընդունման ժամանակ մարդու վարքագիծը պայմանավորված է սոցիալական կառուցվածքներո՞վ, թե՞ անհատի ազատ կամքով և պատասխանատու, գիտակցված, ռացիոնալ գործողությամբ: Նպատակահարմար ենք համարում **Structure/agency** մեթոդի կիրառումը, քանի որ այն իր **բազմակառուցվածքայնությամբ** ներառում է Է. Գիդենսի կառուցվածքավորման տեսությունը, Ն. Մոզելիսի պրակտիկան և Մ. Ս. Արչերի մորֆոգենեզը, Պ. Բուրդյոյի հաբիտուսի և Բ. Լատուրի դերակատար-ցանցի տեսությունները, Ջ. Հաբերմասի հաղորդակցական գործողության տեսությունը, ինչպես նաև Ջ. Ալեքսանդերի մշակութային սոցիոլոգիան և Ի. Գոֆմանի համեմատական ֆրեյմ-վերլուծությունը: Այս մեթոդի կիրառումը հեղինակին լրացուցիչ հնարավորություն կտար վերլուծելու **տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների խաղային բնույթի էությունը:**

2. Աշխատանքի վերնագրից ենթադրվում է, որ պետք է ներկայացվեր արդիականացման էվոլյուցիան և Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստը: **Արդիականացումը խիստ բարդ և բազմամակարդակ գործընթաց է, հետևաբար հնարավոր չէ համալիր ուսումնասիրել նրա համատեքստը առանց երևույթի էվոլյուցիոն դիտարկման, արժեբանական փաստարկման, անվտանգային խնդիրների վերլուծության, քաղաքակրթական չափումների դրսևորման առանձնահատկությունների բացահայտման:** Այս առումով աշխատանքը կշահեր, եթե հեղինակն օգտագործեր պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի՝ 2000 թվականից մինչ օրս հետևողականորեն կատարած ուսումնասիրությունները՝ արդիականացման գործընթացի պերմուտացիային վերաբերող մենագրություններն ու հոդվածները՝ նվիրված քաղաքական արդիականացման գործընթացի և՛ խաղային բնույթին, և՛ քաղաքակրթական կերպափոխումներին, և՛ աստիճանակարգային ու

ցանցային մոդելային դրսևորումներին (**Մարգարյան Մ. Մ.,** - Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր.- Եր., «Պետական ծառայություն», 2004, 308 էջ: Մարգարյան Մ. Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, - Եր., «Պետական ծառայություն» հրատարակչություն, 312 էջ: Մարգարյան Մ. Մ.- Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումները: Հայկական հեռանկարներ (հոդվածների ժողովածու), - Եր.: «Պետական ծառայություն», 2025, 484 էջ):

3. Քաղաքական կառավարման արդիականացումն առաջին հերթին ենթադրում է քաղաքական որոշման ընդունում, ինչպես նաև այդ որոշման ընդունման և իրականացման քաղաքական և վարչական դերակատարների միջև առկա տեղեկատվա-հաղորդակցական կապի ուսումնասիրում: Աշխատանքը կշահեր, եթե առանձին ներկայացվեր ՀՀ-ում քաղաքական որոշման ընդունման և իրականացման քաղաքական և վարչական դերակատարների միջև առկա ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ կապերը: Համոզված ենք, որ նմանօրինակ մոտեցումը հեղինակին հնարավորություն կտար, կարևորելով քաղաքական և վարչական էլիտաների պատասխանատվությունը, տարբերակելու քաղաքական, պառլամենտական և համագործակցային մշակույթների մանիպուլացման գործընթացի վրա **տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների ազդեցության խաղային բնույթը:**

4. Արդի քաղաքական գիտության (Political Science) զարգացման ժամանակակից միտումներում հստակ է **տեղեկատվահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը. «փափուկ ուժի» միջոցով քաղաքական զարգացման ճգնաժամերի վերաբերյալ զուգահեռ մեկնություններ և նոր իրականություններ ստեղծելով՝ արդիականացնել պետական կառավարումը: Եթե հեղինակը խնդիրը դիտարկի այս դիտանկյունից, կկարողանա մշակել քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման տեխնոլոգիաներ՝ կարևորելով տեղեկատվա-հաղորդակցական ցանցում «խելացի ուժի» գործառնման հիմնախնդիրը՝ որպես պետական կառավարման արդիականացման պատասխանատուի:**

5. **Աշխատանքում առկա են տեխնիկական բացթողումներ և լեզվական անհարթություններ:**

Վերոնշյալ դիտարկումները, սակայն, չեն ստվերում աշխատանքի ակադեմիական և կիրառական արժեքը: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն հիմնավորված գիտագործնական նշանակություն:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ **Իրինա Արթուրի Քարամյանի «Տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման**

հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսությունը **լիովին համապատասխանում է ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում:

ՀՀ պետական կառավարման
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Հ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան